ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«29» ապրիլի 2021թ. № 208

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ ենթակետով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 50 որոշումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 01032021-06-0023 վկայականը՝ ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով պատկանող՝ «քաղաք Սպիտակ, Ս. Ավետիսյան փողոց 316» հասցեում գտնվող, «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակի Դ.Տեր-Սիմոնյանի անվան N 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կողմից տիրապետվող, 06-006-0501-0066-001 կադաստրային ծածկագրով 2193,86 քառակուսի մետր մակերեսով դպրոցի զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ 0,36011 հեկտար մակերեսով հողամասը նվիրել Հայաստանի Հանրապետությանը:

2. Հայաստանի Հանրապետության հետ կնքել նվիրատվության պայմանագիր, որից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

3. Աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնին սահմանված կարգով փոփոխություն կատարել համայնքի հողային հաշվեկշռում:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. ապրիլի 29

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«29» ապրիլի 2021թ. № 209

## ԱՇՈՏ ՌԱՖԻԿԻ ՍՈՂՈՄՈՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին կետով և 16-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշման 3-րդ կետի «ը» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ Աշոտ Ռաֆիկի Սողոմոնյանի կողմից 1989 թվականից փաստացի տիրապետվող Չարենցի փողոցի վրա գտնվող 06-006-0130-0067 և 06-006-0130-0068 կադաստրային ծածկագրերով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,04257 հեկտար մակերեսով հողամասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածով սահմանված պահանջներին, ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով հողի հարկի վճարման անդորրագրերը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը և Աշոտ Ռաֆիկի Սողոմոնյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Վերականգնել հողհատկացման հիմքերը և օրենքի ուժով ճանաչել Աշոտ Ռաֆիկի Սողոմոնյանի (ծնված 15.08.1968թ.) սեփականության իրավունքը Սպիտակ համայնքի Չարենցի փողոցի վրա գտնվող՝ 06-006-0130-0067 և 06-006-0130-0068 կադաստրային ծածկագրերով բնակավայրերի նպատակային նշանակության 0,04257 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել « քաղաք Սպիտակ, Չարենցի փողոց, թիվ 17 » հասցեն:

3. Սույն որոշումից ծագող իրավունքը և տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

4. Աշոտ Ռաֆիկի Սողոմոնյանին՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում դիմել Սպիտակի համայնքապետարան սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի վրա առկա բնակելի նշանակության 25,81 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով ինքնակամ կառույցներն օրինականացնելու գործընթաց սկսելու նպատակով:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ.ապրիլի 29
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«29» ապրիլի 2021թ. № 210

## ՍԱՐԳԻՍ ՎԱԼՈՌՅԱՅԻ ԹԱՄԱՄՅԱՆԻՆ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 8-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 33.1-ին կետի «ա» ենթակետով, 34-րդ կետով, 35-րդ կետի «ա» ենթակետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 2021 թվականի ապրիլի 14-ի թիվ 14042021-06-0032 վկայականը և Սարգիս Վալոդյայի Թամամյանի համաձայնությունը ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող՝ «քաղաք Սպիտակ, Ս.Ավետիսյան փողոց, թիվ 70/1» հասցեում գտնվող 06-006-0520-0010 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,012917 հեկտար մակերեսով հողամասը կադաստրային արժեքով՝ 68 201,76 ՀՀ դրամ, իսկ օրինական ճանաչված 91,75 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը 300 957 ՀՀ դրամ արժեքով՝ որպես կառույցն իրականացրած անձի, գնման նախապատվության իրավունքով օտարել Սարգիս Վալոդյայի Թամամյանին (ծնված 07.07.1964թ.):

2. Սարգիս Վալոդյայի Թամամյանի հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որից ծագող իրավունքն օրենքով սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

3. Աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետին և աշխատակազմի ֆինանսական և եկամուտների

հավաքագրման բաժնի պետին՝ սահմանված կարգով փոփոխություն կատարել համայնքի հողային հաշվեկշռում և ամենամյա գույքագրման փաստաթղթերում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ.ապրիլի 29
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«29» ապրիլի 2021թ. № 211

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 2387-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և 50-րդ կետով, հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 1-ի թիվ 1054-Ն որոշմամբ Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով փոխանցված 490-041 կադաստրային ծածկագրով 0,71 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասից առանձնացված 06-006-0490-0112 կադաստրային ծածկագրով 0,002 հեկտար մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող ավտոտնակին նախկինում տրամադրված «ք. Սպիտակ Շահումյան փողոց 3/3ա» հասցեն չի համապատասխանում .Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջներին՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող՝ Շահումյան փողոցի վրա գտնվող 06-006-490-0112 կադաստրային ծածկագրով 0,002 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի և դրա վրա գտնվող ավտոտնակի «ք. Սպիտակ Շահումյան փողոց 3/3ա» հասցեն փոխարինել «ք.Սպիտակ, Շահումյան փողոց, թիվ 252» հասցեով:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2021թ. ապրիլի 29
ք.Սպիտակ